

**ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՍՊԵԼԸ,
ԴՐԱ ԱՌԱՋԱՑՄԱՆ
ՊԱՏՃԱՌՆԵՐՆ ՈՒ ՀՈԳԵԲԱՆԱԿԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ
ԱՐԱՅԻԿ ՄԿՐՏՈՒՄՅԱՆ**

Բանալի բառեր – Միջնադար, ազատագրություն, առասպել, փրկություն, քաղաքականություն, բանակցություն, որոնումներ, նվաճումներ, կրոն, դավանանք, համագործակցություն, արևմուտք, ժողովուրդ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

1045թ. Անիի թագավորության կործանումով Հայաստանում ըստ էության ավարտվեց պետականությունների դարաշրջանը և սկսվեց օտար տիրապետողների երկարատև փուլը, որը չնչին ընդհատումներով տևեց մինչ 1918թ. ապա ընդհատվեց Խորհրդային Հայաստանի 70-ամյա գոյությամբ՝ մինչև 1991թ. երբ ԽՍՀՄ-ը փլուզվեց և Հայաստանը անկախացավ: Շուրջ մեկ հազարամյակ պետականություն չունենալը մեծ խնդիրներ առաջացրեց ոչ միայն տնտեսական, քաղաքական, ժողովրդագրական ու ռազմական առումներով, այլև մեծ չափով այլասերեց հայ ժողովրդի լեզվամտածողությունը: Հայկական լեռնաշխարհի ներթափանցած օտար ցեղերը հայ ժողովրդին պարբտադրեցին իրենց տնտեսական ու մշակութային կանոնները: Չունենալով պետականության վերականգնման համար անհրաժեշտ ռազմական ուժ, հայերը փորձեցին հարցը լուծել դաշնակցային որոնումներով: Օտար տիրապետողների կողմից հայկական ազնվականության ոչնչացմանն ուղղված քայլերը ի վերջո հանգեցրին մի աղետալի իրավիճակի, երբ հայ ժողովուրդը մեծ մասամբ զրկվեց ֆինանսներ, ռազմական ու վարչական ուժ ունեցող կառավարիչներից՝ ազնվական դասից: Ստեղծված պայմաններում միակ կառույցը, որ կարողացավ դիմանալ՝ եկեղեցին էր, որի լիդերներն էլ իրենց վրա վերցրին ժողովրդի կազմակերպման վարչական աշխատանքները՝ միջնորդ

հանդիսանալով օտար նվաճողների ու ժողովրդի մեջ: Անկախության ու պետականության վերականգնման նպատակով ընտրվեց դաշնակիցներ փնտրելու ճանապարհը: Դաշնակից որոնելու և նրան համոզելու համար որպես դիվանագիտական գործիք սկսեց օգտագործվել կրոնական քողով դրսևորվող ազատագրական գաղափարախոսություն, որը պատմության մեջ է մտել «Հայ ազատագրական առասպել» անվանումով: Այդ առասպելը, որը տարբեր ժամանակներում տարբեր երկրների էր ընտրում որպես ազատարարի՝ դարերի ընթացքում փոփոխվում էր և լրացվում «նոր բացահայտումներով ու հիմնավորումներով»: Առաջ էին քաշվում Ներսես Մեծ կաթողիկոսի մարգարեացումները, Բյուզանդիայի կայսր Կոնստանդինոսի կողմից իբրև թե գրված «Դաշանց թուղթը», որով բյուզանդացիները հար-հավիտյան եղբայր էին հռչակվում հայերին: Գաղափարախոսության իմաստը որևէ քրիստոնյա ուժեղ պետությանը շահագրգռելն էր՝ Հայաստանին ռազմական օժանդակություն ցուցաբերելու և նույնիսկ հայերի համար տարբեր նվաճողների դեմ կռվելու առումով: Այդ գաղափարախոսությունը ինքն իրենով անորոշ էր և ոչ մի հստակ առաջարկ չէր պարունակում, ուստի և ոչ մի գործնական հաջողություն չգրանցեց: Դրա փոխարենը ժողովրդի մեջ արմատավորվեց ուրիշի վրա հույս դնելու, սեփական ուժերին չվստահելու միտումը: Այդ մտածողությունն այնքան կարծրացավ, որ դարձավ հայ հասարակության քաղաքական ու ռազմական տրամաբանության սյուններից մեկը: 13-րդ դարից սկսած հայ քաղաքական միտքը զարգանում էր հումանիտար արժեքների վրա հիմնված ադերսագրերի տեսքով, որը, ոչ մի օգուտ չտալով, բթացնում էր հասարակությանը և նրան համոզում, որ սեփական ուժերով անհնար է որևէ հաջողության հասնել: Մենք նման մտածողության հանդիպում ենք տարբեր դարաշրջաններում և այդ առասպելը ենթագիտակցաբար կենսունակ է նաև այսօր, երբ նույնիսկ 1991թ անկախությունից և Արցախյան առաջին պատերազմում հաղթանակից հետո անգամ, հասարակության մեծ մասը տասնամյակներ շարունակ համոզված է, որ Հայաստանն իր հարցերը կարող է լուծել միայն այն դեպքում, երբ ունենա հզոր հովանավոր, ընդ որում հովանավորը պիտի հայերին օգնի ոչ թե փոխադարձ շահի, այլ, ինչպես արդեն նշվեց՝ հանուն մարդկային ու քրիստոնեական արժեքների:

Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել, թե ինչպես ձևավորվեց այդ առասպելը, ինչ հիմնավորումներ և արդարացումներ էր առաջ քաշում, ինչպես զարգացավ և ինչ տրամաբանությամբ էր գործում: Կփորձենք հասկանալ, թե որքանով էր այդ առասպելն անհրաժեշտ և օտակար ու ինչ ազդեցություն ունեցավ հայ ժողովրդի հոգեբանության վրա:

ԻՆՉ Է ԱՌԱՍՊԵԼԸ ԵՎ ԻՆՉՊԵՍ Է ԱՅՆ ԱՇԽԱՏՈՒՄ

Ցանկացած լեգենդի կամ առասպելի ձևավորումը շատ երկար է տևում: Բավական երկար ժամանակահատված ու տասնյակ գործոններ են պետք, որպեսզի որևէ միտք ձևավորվի ու հասցվի միֆի ու առասպելի աստիճանի: Ամենադասական իմաստով առասպելների ձևավորումը խստորեն կապված է մարդկային հասարակության զարգացման հետ ու այսօր գոյություն ունեցող առասպելները հստակ ցուցիչներ են տվյալ հասարակության անցած ճանապարհի, նրա սոցիոնորմատիվ մշակույթի ու ընդհանրապես քաղաքակրթական արտադրանքի առումով: Հայոց ազատագրական առասպելն, իհարկե, դասական իմաստով «առասպել» դասակարգման մեջ չի մտնում մի շարք էական պատճառներով: Այնտեղ ևս կա դրա նախասկզբային ու նախասահմանվածության սկզբունքը, որը հիմնված է անբեկանելի ու սրբադասված հրամանի ու ճակատագրի վրա, բայց այստեղ բացակայում են մի շարք գործոններ, որոնք ազատագրական առասպելը որպես այդպիսին տարբերակում են ազգագրության ուսումնասիրման առարկա հանդիսացող կրոնաանթամշակութային դրսևորումներից, հեքիաթներից ու այլ գաղափարներից, որոնք որպես կանոն իրենց արտացոլանքն են գտնում առասպելներում և այլ հրաշապատումներում:

Ի՞նչ է լեգենդը կամ առասպելը: Եթե կարճ, ապա դա այն առասպելական կամ գերբնական իրավիճակն ու սպասելիքն է, որը որևէ ժողովուրդ անառարկելիորեն ընդունում է որպես իր ճակատագրի մի մաս: Այդ ժողովուրդը հավատում է իր լեգենդին ու առասպելին ու նրանում արտահայտվող բախտորոշ դրսևորումներին: Լեգենդներն ու առասպելները հստակորեն աղերս ունեն կրոնական պատկերացումների հետ ու զարմանալի չէ, որ հաճախ դրանք կրոնական արտահայտչաձև էլ ունեն և հենց կրոնական հավատալիքի մի մասն են հանդիսանում:

Լեգենդը ավանդազրույց է, որի հիմքում ընկած է հրաշքը: Հրաշապատումն ընդգրկում է դեպքերը և հերոսներին: Լեգենդը շատ նման է առասպելին, սակայն նրանք տարբեր են իրարից: Առասպելը հիմքում ընկած է պատմական որևէ փաստ, ինչը հենց սկզբից ստանում է չափազանցված գերբնական տեսք: Ժամանակի ընթացքում այդ իրական հիմքը աստիճանաբար մթագնում է:

Առասպելը ժողովրդական բանահյուսական վիպերգական ժանրերից մեկն է, որի մեջ գերբնական ու չափազանցված ձևով արտացոլվել են հնագույն ժողովուրդների կյանքի կարևորագույն դեպքերը, աշխարհի վերաբերյալ մարդկանց պատկերացումներն ու ընկալումները: Առասպելների հիմքում, հիմնականում, ընկած են եղել տվյալ ցեղի, ժողովրդի կյանքում տեղի ունեցած իրական դեպքերը, սակայն բնության դեմ դեռևս անգոր մարդն իր սնտոխապաշտ մտածողությամբ երևույթները բացատրել է որպես աստվածների և ոգիների գերբնական ուժի արտահայտություն: Այդ պատճառով էլ իրական հիմք ունեցող դեպքերի ու հերոսների պատմությունն ի սկզբանե ընդունել է չափազանցված և գերբնական բնույթ:

Լեգենդը այսօր գոյություն ունի առավելապես գրական ստեղծագործությունների և ասքերի տեսքով և ըստ էության չի հանդիսանում հայ ժողովրդի ամենահրատապ դարձած օրակարգային խնդիր: Ավելի պարզ ասելու համար օրինակ բերենք: Օրինակ՝ հիմա մենք չենք սպասում, որ Վահագնը գա և հայ ազգին ազատի բոլոր չարիքներից ու դա ոչ միայն այն պատճառով, որ այսօր հեթանոսությունը ըստ էության գոյություն ունի միայն շատ փոքր խմբերի մոտ ու առավելապես սիմվոլիկ բնույթ է կրում: Իհարկե հեթանոսական շատ ծեսեր ու սովորույթներ ենթազիտակցական մակարդակում պահպանվել են, բայց չունեն գործնական բնույթ: Առասպելները չունեն պատմական հիմք և հանդիսանում են երևակայական դեպքերի արտահայտում: Դրանց հիմքում ընկած է հրաշքը և առավելապես կրոնական բնույթ ունի:

Առասպելի հիմքում ընկած է լինում սովորաբար որևէ պատմական փաստ, բայց ընթացքում այն սկսում է ներկայացվել խիտ ու խիտ չափազանցություններով ու պատմական որևէ փաստը կարող է որպես առաս-

պել այնքան չափազանցվել, որ երևակայական մասը կուլ է՝ տալիս իրական հատվածից ու դառնում է ամբողջովին ֆանտաստիկ ժանր:

Առասպելներն ու լեգենդները, երբ այսպես ասած, իրենց դարն ապրում են և դրանց այլևս չեն հավատում, դրանք, փոփոխվելով վերածվում են հեքիաթների: Մենք շատ հաճախ կարող ենք հանդիպել դեպքերի, երբ որևէ դեպքի կամ պատմությանը չհավատալով ասում են դա հեքիաթ է, ինչը նշանակում է, որ դա գոյություն չունի և դրա չեն հավատում: Հեքիաթը հենց այդպես էլ ընկալվում է՝ մի բան որ գոյություն չունի; Մի ժամանակ առասպելներին ու լեգենդներին իրոք հավատացել են և շատ երկար ժամանակ անց, երբ այդ առասպելը կորցրել է իր ակտուալությունը(դրա պատճառները բազմաթիվ են, տնտեսականից մինչև կրոնական փոփոխություններ) և վերածվել պարզապես հիշողության, որն արտահայտվել է հեքիաթի տեսքով: Մարդկանց պատկերացումներում ու տրամադրվածության մեջ այդ առասպելները փոխարինվել են ավելի նորերով, իսկ հները չեն մոռացվել: Դրանք պահպանվել են մինչ օրս, բայց արդեն ոչ թե որպես առասպել, այլ պարզապես հեքիաթ: Իզուր չէ, որ հեքիաթներն իրենց նախնական տեսքով այնքան սարսափելի տեսք են ունեցել, որ դրանք կարող են սարսափ համարվել: Հեքիաթներն այսօր ընկալվում են առավելապես մանկական ժանրի ստեղծագործություն, որովհետև երեխան ապացույց չի պահանջում հեքիաթի համար այնպես ինչպես և հասուն մարդը՝ իր հավատալիքի: Հեքիաթները մանուկներին սկսեց մատուցվել միայն բավական տաշվելուց ու հղկվելուց հետո, թեև այսօր էլ ուշադիր կարդալու դեպքում կարող են հանդիպել բազմաթիվ մոռացված կամ խնամքով թաքցված երևույթներ, ինչպես օրինակ մարդակերություն, արյունապղծություն և այլն: Հասարակության կյանքի փոփոխության հետ մեկտեղ փոխվում են նաև նրա պատկերացումները, ոչ միայն ներկայի ու ապագայի, այլև անցյալի նկատմամբ: Տեսականորեն կարելի է գուշակել, որ որոշ ժամանակ անց ներկայիս կրոնները կվերածվեն առասպելների, իսկ հետո՝ նաև հեքիաթների, այնպես ինչպես ժամանակին հեթանոսական ու նախադիցարանային հավատալիքներն ու պատկերացումները վերածվեցին առասպելների, իսկ հետո նաև հեքիաթների:

Այս երկար նախաբանն անհրաժեշտ էր որոշ պարզեցումներ մտցնելու համար, որը և կօգնի ավելի լավ հասկանալու Հայ ազատագրական առասպելի ամբողջ էությունը, հոգեբանական ազդեցությունը, խնդիրները: Հայ ազատագրական առասպելը, իր ձևավորման պատմությամբ և ձևաչափով չլինելով դասական առասպել, հայ էթնոսի վրա շատ ավելի ուժեղ ազդեցություն և հետևանք թողեց, քան հնարավոր էր պատկերացնել այդ ժամանակ:

ՀԱՅ ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ԱՌԱՄՊԵԼԸ, ԱՌԱՋԱՑՄԱՆ ՊԱՏՃԱՌՆԵՐԸ, ԸՆԹԱՑՔԸ, ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ

Հայ ազատագրական առասպելը հորինվեց որպես գաղափարախոսություն, ըստ որի հայերը որևէ օտար ուժի օգնությամբ պետք է վերականգնեին անկախությունն ու պետականությունը: Գաղափարախոսության հիմքում ընդգծված էր հատկապես երկու երևույթ:

Առաջինը՝ փրկիչները քրիստոնյաներ էին լինելու և երկրորդ՝ նրանք գալու էին արևմուտքից: Այդ առասպելը տարբեր ժամանակաշրջաններում հայ ժողովրդի փրկության համար տարբեր կերպարների է ընտրել՝ Վենետիկ, Ֆրանսիա, Գերմանիա, Լեհաստան, Ռուսաստան և այլն:

Հարկ ենք համարում նախ անդրադառնալ, թե ինչու և ինչպես այդ առասպելը կրոնական քողով ձևավորվեց և ինչու այդ առասպելում փրկությունը պետք էր սպասել արևմուտքից(հետագայում՝ ռուսական արշավանքների հետևանքով, փրկությունը սկսեց ակնկալվել նաև հյուսիսից):

Հայ ազատագրական առասպելը, ի տարբերություն դասական լեգենդների, այսօր բավական կենսունակ է, այն բազմաթիվ արտաքին փոփոխություններ է կրել, բայց գոյություն ունի մինչև հիմա ու դրա ապացույցները բազմաթիվ են: Այդ առասպելը, որը ձևավորվեց միջանադարում, կարողացավ դիմանալ ժամանակի փոփոխություններին ու էլ ավելի ամրապնդվեց: Դրան նպաստող գործոններից ամենակարևորն իհարկե քաղաքական ծանրագույն դրությունն էր ու դրանից ելք չգտնելու դառը փաստը, իսկ ազատագրական առասպելը հույս էր տալիս մոտալուտ ազատության: Ունենալով կրոնական բացատրություն, այն արդարացված էր ամբողջովին ու մեծ չափով ջերմ ընդունելություն էր գտնում հասարա-

կության բոլոր շրջաններում: Կարևոր էր նաև այն հանգամանքը, որ այդ առասպելը նաև մեծ չափով քարոզվում էր ժամանակի ռազմաքաղաքական ու հոգևոր ղեկավարության կողմից: Պետության բացակայության պայմաններում էլ ավելի էր ուժեղանում ազատագրության առասպելի ուժը: Ժամանակի ընթացքում առասպելը ոչ միայն չթուլացավ, այլև սկսեցին նոր մանրամասներ հայտնագործվել ու առասպելն անընդհատ լրացվում էր տարբեր «հիմնավորված» արդարացումներով, որոնք կասկած չէին թողնում, որ այդ ամենը իրական է, ռեալ է ու ավելին՝ պաշտպանված է Աստծո կողմից: Պետք է նաև հաշվի առնել ժամանակի յուրահասկությունը: Միջնադարում կրոնը ավելի մեծ ու ավելի ուղիղ ազդեցություն ուներ հասարակությունների վրա, քան հիմա և բնականաբար հոգևոր կառույցների ու գործիչների հեղինակությունը շատ ավելի մեծ էր: Այդ «արդարացումներից» կարելի է օրինակ բերել այն, որ սկսեցին լուրեր շրջանառվել, որ դեռևս Ներսես Մեծ կաթողիկոսը մահվան մահճում մարգարեացել է, որ հայ ազգին պատուհասելու են անասելի չարիքներ, բայց նաև գալու է փրկությունը և նույնիսկ լրջորեն քննարկվում էր «Դաշանց թուղթ» կոչվող փաստաթուղթը, որ իբրև գրվել էր Բյուզանդիայի Կոստանդինոս կայսեր կողմից, որում հավիտյան դաշինքի մասին էր խոսվում ու բյուզանդացիները հավիտյան եղբայրության ուխտ են կնքել հայերի հետ և պարտավորվում են եղբայրաբար պաշտպանել միմյանց: Իհարկե, այդ թղթի մասին խոսակցությունները երկար չտևեցին, քանի որ Բյուզանդիան ոչ միայն ի վիճակի չէր ինչ որ մեկին օգնություն ցույց տալու, այլև ինքն էր հայտնվել ծանրագույն վիճակում ու այդ ամենն ավարտվեց 1453թ, երբ թուրքերը գրավեցին Կոստանդնուպոլիսն ու վերջ տվեցին Բյուզանդական պետության գոյությանն ընդհանրապես: Հասկանալի է նաև այն, որ «Դաշանց թղթի» ծագման ժամանակը վերագրվում էր հենց Կոստանդինոս կայսեր, որովհետև նրա օրոք Բյուզանդիան հզոր էր և նրա օգնությունը շատ բան կարող էր նշանակել: Բայց ամեն դեպքում ոչ 13-րդ դարում, երբ աշխարհաքաղաքական իրավիճակը լրիվ այլ էր: Մենք այստեղ մի կարևոր նրբություն պիտի ընդգծենք: Անիի Բագրատունյաց թագավորությունը կործանվեց 1045թ.՝ Բյուզանդիայի ակտիվ քաղաքականության պատճառով: Բյուզանդացիները նաև ցրեցին մոտ հարյուր հա-

զարանոց հայոց մարտունակ բանակը: Թեև դա ճակատագրական սխալ եղավ նաև իրենց համար ու հենց 1071թ. դեպքերը դրեցին կայսրության կործանման սկիզբը, բայց պետք է ընդգծել, որ բյուզանդացիները ոչ միայն հեռու էին եղբայրական լինելուց, այլև շատ դեպքերում խիստ թշնամական էին: Ուրեմն ի՞նչն էր պատճառը, որ հայերը ներեցին բյուզանդացիներին իրենց պետականության կորուստը: Ավելին, Բյուզանդիայի կողմից կազմաքանդված Հայաստանը փորձում էր հայ-բյուզանդական եղբայրության մասին վկայող հուսահատ քայլեր գտնել, որով էլ արդարացներ, թե ինչու բյուզանդացիները պիտի օգնեին: Հստակորեն կարող ենք ասել, որ ազատագրության առասպելն այնքան ուժեղ էր, որ հայերը պատրաստ էին ներել բյուզանդացիներին իրենց պետականության կորուստը և նորից համագործակցել: Սա էլք փնտրելու հուսահատ ու ժամանակավրեպ քայլ էր, որը սակայն այն ժամանակ հասկանալի շատ բարդ էր:

Ազատագրական առասպելը փորձ արվեց դարձնել ազատագրական գործիք, բայց անհամար ու անթիվ բարդությունները թույլ չտվեցին դա անելու: Միջազգային իրադրությունն էլ իր հերթին թույլ չտվեց հայերին իրական դաշնակից գտնելու: Չմոռանանք նաև, որ այդ ժամանակներում անկախություն ասվածը երազանքի էր նման: Հայ ժողովուրդը կորցրել էր իր պետականությունը, հնարավոր դաշնակիցները՝ Պարսկաստան, Բյուզանդիա կամ կործանված էին, կամ ուժասպառ եղած, իսկ Հայկական լեռնաշխարհում տարբեր օտար ցեղեր միմյանց դեմ էին մարտնչում: Նման դժոխային պայամաններում բնական է, որ ազատագրական առասպելը անասելի քաղցր էր ընկալվում հայերի կողմից:

Հարկ է նշել նաև այն, որ այդ առասպելը, որին վերագրվում էր Կոստանդինոս Մեծի կողմից գրված «Դաշանց թուղթ»-ը, ավելի խորը արմատներ ունի և 13-րդ դարում չի առաջացել, այլ շատ ավելի վաղ, երբ ոչ մի կերպ հնարավոր չէր կանխատեսել այն սարսափելի ապագան, որ սպասվում էր հայ ժողովրդին: Կոստանդինոս մեծի կառավարման շրջանը(306-337թթ.) համընկնում է մի շրջանի, երբ հայոց պետությունը տարածաշրջանում հզոր ուժ էր, և ըստ էության փրկչի անհրաժեշտություն չկար: Ուրեմն ինչո՞ւ հենց Կոստանդինոս Մեծին վերագրվեց այդ նամակը

և ոչ ասենք Հուստինիանոսին կամ Մորիկ կայսերը: Կամ ինչո՞ւ բյուզանդացիներին և ոչ Պարսկաստանին, Վրաստանին կամ սլավոններին:

Մենք հատուկ մանրամասնեցինք լեգենդ-առասպել տարբերությունները նաև այդ հարցերին պատասխանելու համար: Վրաստանին կամ նման այլ պետության չէր կարող նման դեր վերապահվել, որովհետև Վրաստանը երբեք միջազգային պետության կարգավիճակ չի ունեցել, շատ հաճախ հայ և վրաց ժողովուրդները իրար բախտակից են եղել, հարևան ու դաշնակից, բայց ոչ երբեք հովանավոր, որովհետև եթե ինչ որ պահերի հայերն ի վիճակի են եղել վրացիներին օգնություն տալու կամ հակառակը, դա նշանակում է այս երկու ժողովուրդները հիմնականում ուժերի նույն հարաբերակցությունն ունեին: Պարսկաստանը ևս չէր կարող այդ դերակատարը դառնալ, որովհետև ինչպես արդեն նշեցինք, առասպելը, լեգենդը ունի կրոնական մեծ ազդեցություն, իսկ Պարսկաստանը այդ շրջանում(խոսքը վերաբերում է Կոստանդինոս Մեծի ժամանակաշրջանին) արդեն հանդես էր գալիս նաև որպես քաղաքական, ռազմական, կրոնական հակառակորդ: Հայ-պարսկական հարաբերությունների վրա շատ գործոններ էին ազդում, ինչպես օրինակ Արշակունյաց և Սասանյան տոհմերի պայքարը, քաղաքական ու տնտեսական բավական լուրջ մեխանիզմներ ու կրոնական շղարշը շատ հարցեր էր լուծում, ուստի լրիվ հասկանալի է որ քրիստոնեական Հայաստանի համար զրադաշտ(ավելի ուշ շրջանում մահմեդական) Պարսկաստանը չէր կարող հովանավորի ու փրկչի դեր տանել, մանավանդ եթե հաշվի առնենք այն, որ Պարսկաստանի հետ բախումները մշտապես բորբոքվել են նաև կրոնական տարաձայնությունների շուրջ: Վառ օրինակ է Վարդանանց շարժումը և Ավարայրի ճակատամարտը որպես այդ ամենն ազդարարող սկիզբ, որը մատուցվում է նախ և առաջ որպես կրոնական հարց, այլ ոչ թե ազգային: Սա ևս մի վկայություն է այն բանի, թե ինչքան ուժեղ էր իրադարձությունը կրոնական, աստվածային շնչով արդարացնելու հանգամանքը: Կային նաև այլ խնդիրներ: Հայերն ու պարսիկները մշտապես եղել են մրցակից եթե ոչ հակառակորդ՝ տարածաշրջանում գերիշխելու համար ու դրա արմատները շատ հեռու են գնում, նույնիսկ Տիգրան Մեծից էլ շատ առաջ: Վարդանանց շարժումն ընդդեմ Պարսկաստանի իհարկե առաջին հերթին ուներ

ազգային-քաղաքական ուղղվածություն և պարսիկների կողմից կրոնական ճնշումները միայն սրեցին իրավիճակը: Հայ-պարսկական ոչ խաղաղ անցյալն ու այդ օրերի անհաշտ ներկան վկայում էին այն բանի մասին, որ առկա խնդիրները չեն կարող շատ արագ ու սեղմ ժամկետներում լուծվել ու Ավարայրը հենց դրա ապացույցներից մեկն էր: Մենք այստեղ չենք քննարկի Վարդանանց շարժումն ու Ավարայրը, որովհետև դա լրիվ առանձին ուսումնասիրության թեմա է, և սա մի օրինակ է միայն այն բանի, որ ազատագրական առասպելում փրկչի դերի համար Պարսկաստանը ամենաանհարմար թեկնածուն էր:

Եվ այսպես Պարսկաստանի պահը պարզ է, ու տարածաշրջանում հաջորդ ազդեցիկ ուժը Բյուզանդիան էր, թեև նրա հետ ևս հարաբերությունները մշտապես խաղաղ չեն եղել: Բազմաթիվ օրինակներ կան հայ-հռոմեական պատերազմների ու դաշինքների մասին, ու ոչ միայն Բյուզանդիայի, այլև նրա նախորդ՝ Արմտահռոմեական կայսրության՝ Հռոմի հետ: Եվ այս իրավիճակում Բյուզանդիան ոչ միայն ուժեղ էր ու ազդեցիկ, այլ նաև քրիստոնյա և կրոնական ընդհանրությունը պարարտ հող էին ստեղծում հայ-բյուզանդական հարաբերությունների մերձեցման համար: Պատմությունը ցույց տվեց, որ դրա վրա հույս դնելը ավելի շատ խնդիրներ կարող է առաջացնել, քան օգուտ ու դրա հետևանքը եղավ այն, որ քրիստոնյա հայն ու բյուզանդացին իրենց կրոնական պատկերացումներում այնքան մեծ տարածայնություններ ունեին, որ իրար դեմ կարող էին պատերազմել ոչ պակաս կատաղությամբ, քան երկու տարբեր կրոնի ներկայացուցիչներ: Մենք դրա հրաշալի օրինակն ունենք Եվրոպայում, երբ կաթոլիկ Իսպանիան պայքարում էր բողոքական Անգլիայի դեմ, երբ Ֆրանսիայում հուգենոտների դեպ պայքարը գրեթե քաղաքացիական պատերազմի էր հանգեցնում, կամ սարսափելի 30 ամյա պատերազմը: Դրանց բուլրի հիմքում կային տնտեսական ու քաղաքական պատճառներ, իսկ կրոնական տարածայնությունները միշտ միայն սրում են իրավիճակը: Իսկ կրոնը մշտապես օգտագործվել է պետությունների քաղաքական շահերը առաջ տանելու նպատակով: Հռոմեական եկեղեցին մշտապես փորձում էր հայերին դավանական փոփոխություններ ընդունել ու մտնել կաթոլիկ եկեղեցու շարքերը, իսկ հայերը ընդդիմանում էին: Կարող ենք վստահությամբ

ասել, որ բյուզանդական կայսեր դավանական ճնշումները ոչ թե ջերմ հավատացյալ լինելուց էր բխում, այլ կրկին քաղաքական ու տնտեսական շահերով, որովհետև կրոնը միջնադարում ամենաազդեցիկ մշակութային կառավարիչ գործիքն էր: Հատկապես միջնադարում այդպես էր և գրեթե բոլոր գործողությունները փորձ էր արվում արդարացնել կրոնական հիմքով: Խաչակրաց արշավանքները դրա լավագույն ապացույցներից են: Կրոնը առաջին հերթին փորձել են կիրառել որպես գաղափարական զենք, որը շատ ավելի մեծ արդյունքներ է տալիս: Շատ ավելի ուշ, երբ կրոնական ազդեցությունն իր տեղը զիջել էր պետական վարչական իշխանությանը, տեսնում ենք, որ հենց նույն Եվրոպայում այլևս չկային այն կրոնական կոիվները, որ ընդամենը մի քանի հարյուր տարի առաջ անվերջանալի մղձավանջ էին թվում: Միջնադարից ոչ առաջ, ոչ էլ հետո աշխարհում երբևէ նման մասշտաբների կրոնական պատերազմներ չեն գրանցվել: Անհատ անձինք, ծայրահեղական խմբավորումներ և այլք փորձել ու փորձում են կրոնական բնույթ տալ իրենց գործողություններին, բայց դրանք կրում են լոկալ բնույթ ու ըստ էության որոշիչ չեն: Իրար դեմ կատաղի պայքար մղող Իսպանիան ու Գերմանիան հաջողությամբ դաշնակցում էին երկրորդ համաշխարհային ժամանակ ընդդեմ այլ բողոքական ու կաթոլիկ պետությունների, իսկ հավատաքնությունն ու մարդկանց ողջակիզումները մնացել են անցյալում: Այժմ պետություններում տնտեսական ու քաղաքական շահերը արտահայտվում են ազգային շահերով:

Բայց լրիվ ուրիշ իրավիճակ էր միջնադարում: Կրոնի ամենագործության ժամանակաշրջանն էր, և դա առաջին գործոնն էր, որով հայերը հակադրվում էին ներխուժող ցեղերին, որոնք էլ ի դժբախտություն հայերի՝ մահմեդական էին: Ամենածանրն այն էր, որ անմիջական հարևան Պարսկաստանը, որն ի վերջո կարողացավ կրկին ոտքի կանգնել, արդեն մի քանի դար է, ինչ մահմեդական էր ու դա ևս իր բաժինն ունեցավ հայերի ծանր ճակատագրում: Պետք է նաև նշել, որ այդ առասպելը, որ գլխավորապես 13-րդ դարում մտավ շրջանառության մեջ, ուժգնանում և թուլանում էր՝ կախված, թե հայ ժողովուրդն ինչ վիճակում էր գտնվում: Պարզագույն համեմատությամբ կարող ենք ասել, որ ազատագրական առասպելը եթե Աբգար Դպիրի ժամանակ շատ ուժեղ էր և հայերը առանց

որևէ հիմնավորման փորձում էին Եվրոպայից օգնություն ստանալ, ընդ որում հաշվի չառնելով միջազգային իրավիճակը, ապա 1720-ականների Արցախի և Սյունիքի ազատագրական պայքարի ժամանակ այլևս նման հավակնություններ չունեին, սեփական ուժերով էին երկրամասն անկախացրել և բանակցում էին պարսիկների և ռուսների հետ որպես քիչ թե շատ կայացած ուժեր: Առասպելը թուլանում էր այն ժամանակ, երբ հայերի կողմից պրակտիկ գործողություններ էին սկսվում և ուժգնանում էր, երբ իրավիճակն առավելապես անմխիթար էր:

Պատմությունից տեսնում ենք, որ ազատագրության առասպելը որպես այդպիսին կիրառության մեջ չի մտել ո՛չ Արշակունյաց Հայաստանում, ո՛չ Բագրատունյաց Հայաստանում: Նույնիսկ արաբական արշավանքների ժամանակ ազատագրության լեգենդը չէրևաց: Պատճառներից մեկն էլ այն է, որ դեռևս բավարար պատճառներ չկային դրա վերջնական ձևավորման համար: Հիմնականը որ պետք է նշել այն է, որ Ազատագրության առասպելի անհրաժեշտությունը երբեք չի զգացվել ամուր ու պաշտպանված իրավիճակներում: Նույնիսկ մարզպանական Հայաստանում կամ Արմինիա կուսակալության ժամանակ դա պետք չէկավ, որովհետև Հայաստանը այդ ժամանակներում դե ֆակտո անկախ և տնտեսապես միասնական հզոր երկիր էր՝ սեփական միասնական տնտեսական համակարգով, մեծ ռազմական ներուժով, ամբողջովին ինքնաբավ, այնպես որ պարսկա-բյուզանդական իսկ ավելի ուշ՝ արաբական տիրապետության ժամանակներում հայ ժողովուրդը միայն իրավաբանորեն էր ենթարկվում, իսկ իրականում ամբողջովին անկախ էր: Բայց այդ վիճակը լրիվ փոխվեց միջնադարում, երբ Հայաստանը բոլոր կողմերից ենթարկվեց միանգամից մի քանի ուժերի հարձակման: Հայաստանում միաժամանակ իրար դեմ էին պայքարում թուրքական, թուրքմենական, մոնղոլական մի քանի մանր ու մեծ պետություններ ու դա հանգեցրեց հայ ժողովրդի տնտեսական քայքայմանը, իշխանական էլիտայի գրեթե ոչնչացմանը: Ու ստեղծվեց մի վիճակ երբ Հայաստանը բաժան բաժան էր արված միաժամանակ երեք-չորս ուժի մեջ որոնք բոլորը թշնամի էին իրար, այդ պատճառով էլ պատերազմները երբեք չէին դադարում: Չկար ոչ մի պետություն, որի հետ կարելի էր հույսեր կապել: Իսկ նոր նվաճողներն ավե-

լի դաժան ու վայրենի էին: Ժողովուրդը հայտնվել էր տնտեսական ու հոգեբանական ծանրագույն իրավիճակում և չգիտեր թե ինչ անել: Արտագաղթը ավելի էր թուլացնում դիմադրողական ուժը: Մնացել էին միայն հատ ու կենտ թվով իշխանական տոհմեր, որոնք սակայն ուժասպառ վիճակում էին ու լուրջ ռեսուրսներ չունեին: Միակ կառույցը որ քիչ թե շատ կենսունակ էր՝ եկեղեցին էր, որն էլ նվաճողների ուղիղ նշանառության տակ էր ու հենց եկեղեցին էլ իր վրա վերցրեց հայոց անկախության վերականգնման ծանրագույն գործը: Զրկված լինելով աշխարհիկ ուժերի ռազամաքաղաքական աջակցությունից, եկեղեցին վերջնական տեսքի բերեց Հայ ազատագրական առասպելը, ըստ որի որևէ քրիստոնյա ուժեղ պետություն արևմուտքից պիտի գար ու փրկեր մեզ: Ինչո՞ւ արևմուտքից, որովհետև արևելքն ամբողջովին մահմեդականացված էր, և քրիստոնյաները արևմուտքում էին: Կ.Պոլսի անկումից ու Օսմանյան թուրքերի իշխանության հաստատումից հետո քրիստոնյա արևմուտքն ավելի էր հեռացել մեզնից: Արդեն նշեցինք, թե ինչ գծերով էր ձևավորվել ու լրացվել այդ լեզենդը: Հայոց եկեղեցին այլ տարբերակ չուներ, քան կրոնական բնույթ տալ դրան, որովհետև դա միակն էր որը կշահագրգռեր եվրոպացիներին: Բայց պատմությունը ցույց տվեց, որ եվրոպացիները նույնքան անտարբեր էին կրոնական միասնության հարցում, ինչպես որ բյուզանդացիները ու կրկին սկսվում էր դավանափոխության անվերջանալի պահանջները, որի դիմաց ոչ մի հստակ բան չէր առաջարկվում: Առասպելը եթերային կարգավիճակից անցավ գոնե տեսական մակարդակի, երբ Իսրայել Օրին, հետագայում Հովսեփ Էմինը, Մադրասի խմբակը, Հայաստանի ազատագրության հարավային ու հյուսիսային ծրագրերը փորձեցին կրոնական քողից ձերբազատվել ու քիչ թե շատ ռեալ ինչ բան ունենալ: Այլ հարց է, թե որքանով էին այդ առաջարկներն իրատեսական: Դրանից առաջ ու հետո ազատագրական լեզենդը բազմիցս փոփոխության ենթարկվեց, փրկչի դերը շատերին վերապահվեց ու վերջում այդ դերը հատկացվեց Ռուսաստանին, ինչը մեծապես անփոփոխ է նաև այսօր՝ հաշվի առնելով ներկայիս ռազմաքաղաքական իրավիճակը: Դրան նաև մեծապես նպաստեց ռուսական կայսերական տիրապետությունն ու խորհրդային ռեժիմը:

Հայ ազատագրական առասպելը, որ կիրառության մեջ մտավ 13-րդ դարում, կես հազարամյակից ավել կենսունակ լինելով էապես փոփոխություններ մտցրեց հայ էթնոսի լեզվամտածողության մեջ: Ուրիշի ձեռքերով փրկություն գտնելու այդ գործիքը, որ կարճաժամկետ պլանում մեծ հաջողություն էր խոստանում, երկարաժամկետ պլանում իսկական փորձանք դարձավ ժողովրդի գլխին՝ ազդելով ոչ միայն հասարակ խավերի, այլև մտավորական ու կառավարող էլիտայի վրա:

Այսօր այդ առասպելը կենսունակ է առավել քան երբևէ: Այն այնքան ուժեղ ազդեցություն ունեցավ, որ նույնիսկ հայկական քաղաքական ու դիվանագիտական միտքը մեծապես կրեց դրա ազդեցությունը: Ներկայումս հայ ազատագրական առասպելը բավական լողոված վիճակում է և ենթագիտակցական մակարդակում մեծ աջակցություն ունի գրեթե ողջ հանրության կողմից: Այդ առասպելի ենթագիտակցական հավատացյալները հայ ժողովրդի ազատարարի տարբեր ֆավորիտներ են առաջ քաշում, հիմնականում Ռուսաստան, ԱՄՆ, Ֆրանսիա: Ավելի հեռահար, բայց հավանաբար ապագայում սպասվելիք թեկնածուներ են Չինաստանը, Հնդկաստանը, Իրանը: Կախված, թե միջազգային դրությունն ինչ իրավիճակ կստեղծի աշխարհում, հայ ազատագրական առասպելը կհարմարվի դրան և կփորձի օրվա ուժեղին դարձնել իր առասպելական հերոսը: Հետևանքը բնականաբար հիասթափությունն է: Ազատագրական առասպելը շարունակում է կեղծ օրակարգ սպասարկել և հայ հասարակությանը գրկել իր դիմադրական պոտենցիալից: Հայ ազատագրական առասպելը թմրանյութի ազդեցություն ունի, որը խախուտ է պահում հայ պետականության հիմքերը:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Ուսումնասիրելով հայ ազատագրական առասպելը, կարող ենք եզրակացնել, որ այն արդյունք է սեփական ուժի բացակայության և թուլության: Առասպելական հիմքով փորձ է արվել շահագրգռել օտար երկրներին՝ առանց հաշվի առնելով իրականության մեջ գոյություն ունեցող աշխարհաքաղաքական իրադրությունը, փոխադարձ շահերը: Ազատագրական առասպելը, լինելով հուզական մակարդակում տեսական, անորոշ

աղերսագիր, ի գորու չէ որևէ գործնական հաջողության հանգեցնելու, քանի որ գուրկ է որևէ գործնական հիմքից: Մենք տեսանք, որ ազատագրական առասպելը թուլանում է պրակտիկ գործողությունների ժամանակ և ուժեղանում, երբ հայ ժողովուրդը հույսը դնում է ուրիշների վրա: Ազատագրական առասպելը թմրեցնող ազդեցություն ունի ժողովրդի վրա, որին կարող է զրկել սեփական ուժերը հաշվելու, վերլուծելու, գնահատելու կարողությունից, ժողովրդին դարձնել երազկոտ, հանել ռացիոնալիզմը: Ազատագրական առասպելի զարգացումը արգելակում է որևէ հիմնավորված գործողություն: Հավատալով առասպելին, ժողովուրդն ավելի անպատասխանատու և ծուլ է դառնում, որովհետև առասպելի պարագայում նա ոչ մի պատասխանատվություն չի կրում տեղի ունեցածի համար և սպասում է մինչև աստվածային կամքը կատարվի: Այդ սպասումները, որոնք կարող են շատ երկար տևել, բարդ հոգեբանական կախվածություն, ընկճվածություն են առաջացնում՝ թուլացնելով դիմադրական ուժը: Ուսումնասիրելով առասպելի ձևավորման պատճառները և դրանց զարգացման միտումները, կարող ենք եզրակացնել, որ շուրջ մեկ հազարամյակ օտանների տիրապետության տակ գտնվելով, հայ ժողովուրդը բավական մեծ որակական փոփոխություններ է կրել, որոնք միշտ չէ, որ դրական ընթացք են ունեցել և միաժամանակ թերարժեքության բարդույթ ձեռք բերել, որն այսօր արտահայտվում է պետական քաղաքականության վարման ընթացքում անգամ: Դարերի ընթացքում, շատ անգամներ հայ ժողովուրդը շատ ավելի պասիվ է արձագանքել իր հետ կապված այս կամ այն իրադարձությանը՝ ենթագիտակցորեն հավատալով, որ աստվածային նախախնամությունը փրկելու է իրեն: Կարող ենք եզրակացնել, որ դեռևս դարեր առաջ ձևավորված այդ առասպելը կենսունակ է առ այսօր, թեև արտահայտվում է այլ բառերով և դրսևորումներով: Ազատագրական առասպելի թուլացումը կապված է պետության հզորացման հետ և ՀՀ հզորացման հետ մեկտեղ կրնոգծվի այդ առասպելի անկարևորությունը, քանի որ հայ ժողովուրդը կարող է պրակտիկորեն, իր ուժերով իրականացնել այն, ինչը փորձում է անվճար ստանալ ուրիշներից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Հայոց պատմություն: Հնագույն ժամանակներից մինչև մեր օրերը - բուհական դասագիրք
2. Հովհաննիսյան Աշոտ - Դրվագներ հայ ազատագրության մտքի պատմության, գիրք առաջին
3. Հովհաննիսյան Պետրոս - հայ ազատագրական շարժումները (XV-դարի կես XVIII դարի վերջ)
4. Ժամկոչյան Հ. Գ., Աբրահամյան Ա.Գ, Մելիք-Բախշյան Ս.Տ., Պողոսյան Ս.Պ. Հայ Ժողովրդի Պատմություն սկզբից մինչև XVIII դարի վերջը
5. Փավստոս Բուզանդ «Պատմություն Հայոց
6. <https://republic.mediamax.am/story/115/> էլեկտրոնային գրականություն
7. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%B1%D5%BC%D5%A1%D5%BD5%BA%D5%A5%D5%AC> էլեկտրոնային գրականություն
8. <https://hy.wikipedia.org/wiki/%D4%BC%D5%A5%D5%A3%D5%A5%D5%B6%D5%A4> էլեկտրոնային գրականություն
9. http://www.historyofarmenia-am.armin.am/am/Encyclopedia_of_armenian_history_Israyel_Ori
10. էլեկտրոնային գրականություն
11. Гоббс Т. - Левиафан
12. Эзов Г. А. - Сношения Петра Великого с армянским народом, СПб
13. Фромм Э. - Иметь или быть

Արայկ Մկրտումյան, Արмянский освободительный миф, его причины и психологическое воздействие - 1045г. В Армении завершилась эпоха государственности, после чего армянский народ около тысячелетия жил под властью иноземных завоевателей. Не имея необходимых сил, чтобы освободиться от власти иноземцев, армяне выдвинули освободительную идеологию, которой была дана религиозная основа. Эта идеология стала основным инструментом армянской политической мысли, с помощью которого армяне пытались найти союзника в лице могущественного

государства. Не имея какой-либо оправданной и убедительной основы, этот миф постоянно и безуспешно развенчивался. Наоборот, этот миф оказал большое влияние на мышление армянского народа. Армяне становились все более скептическими, недоверчивыми и подозрительными к собственной силе. Существовало убеждение, что успеха невозможно добиться без чьей-либо помощи. В разное время этот миф смотрел на разные страны как на «божественных спасителей» и пытался заставить их поверить, что это божественная воля, чтобы данная страна пришла и спасла армян. Последствия этого мифа видны и по сей день, когда даже при существовании государства общественное мнение подсознательно ждет своего спасения извне.

Arayik Mkrtumyan, Armenian liberation myth, its causes and psychological impact – In 1045 the era of statehood ended in Armenia, after which the Armenian people lived under the rule of foreign conquerors for about a millennium. Not having the necessary strength to free themselves from the power of foreigners, the Armenians put forward a liberation ideology, which was given a religious basis. This ideology became the main instrument of Armenian political thought, with the help of which the Armenians tried to find an ally in the form of a powerful state. Lacking any justified and convincing basis, this myth has been constantly and unsuccessfully debunked. On the contrary, this myth had a great influence on the thinking of the Armenian people. The Armenians became increasingly skeptical, distrustful and suspicious of their own strength. There was a belief that success could not be achieved without someone's help. At various times, this myth looked at different countries as "divine saviors" and tried to make them believe that it was divine will that a given country come and save the Armenians. The consequences of this myth are visible to this day, when even with the existence of the state, public opinion subconsciously waits for its salvation from outside.

Ուղարկվել է խմբագրություն 04.05.2023թ.

Գրախոսվել է 06.05.2023թ.

Ստորագրվել է տպագրության 07.05.2023թ.